

Վահրամ Ավետիսյան

**ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ղոցենտ,
իրավ. գիտ. թեկնածու**

Դավիթ Սերոբյան

**ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ղոցենտ,
իրավ. գիտ. թեկնածու**

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԻՐԱՎԱՅԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԵՎ ՍԱՅՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎՈՒՔԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱՒԱՆՏՄԱՆ ՏԱՐԱՏԵՍԱԿ

Բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները իրավաբանական անձի առավել բարդ կազմակերպահրավական ձևերն են: Որպես կանոն, այս տնտեսական ընկերություններն ունեն կառավարման մարմինների բարդ, ճյուղավորված կառուցվածք, հետևաբար նաև ընկերության կառավարման մարմինների, դրա բաժնետերերի (մասնակիցների) և կոնտրազենտների միջև ծավալվող հարաբերությունների բարդ համակարգ, որի արդյունքում կորպորացիաների գործունեությունը կարգավորող օրենսդրական ակտերի նոր լինելը, որոշ հարցերում նաև անկատարությունը, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի սակավաթիվ լինելը հանգեցնում են կորպորատիվ իրավահարաբերությունների սուբյեկտների կողմից թույլ տրված իրավունքի չարաշահումների:

Որպեսզի պարզենք, թե ինչպես է տնտեսական ընկերության կողմից իրականացվում կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահումը, անհրաժեշտ է ուսումնասիրել տնտեսական ընկերության կառավարման մարմինների իրավական կարգավիճակը և լիազորությունները: Ընկերության կառավարման մարմինները կատարում են երկակի գործառույթ՝ ընկերության անունից հանդես են գալիս արտաքին հարաբերություններում¹, ինչպես նաև մասնակցում են ներքին հարաբերություններին:

¹ Իրավաբանական անձը ծեռք է բերում քաղաքացիական իրավունքներ և ստանձնում քաղաքացիական պարտականություններ իր մարմինների միջոցով, որոնք գործում են օրենքին, այլ իրավական ակտերին և նրա կանոնադրությանը՝ համապատասխան ՀՀ Քաղ. օր.-ի 57-րդ հոդված: ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք. ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

իրավաբանական անձը քաղաքացիական իրավունքներ է ձեռք բերում և քաղաքացիական պարտականություններ ստանձնում իր մարմինների միջոցով, հետևաբար տնտեսական ընկերության՝ որպես կորպորատիվ հարաբերությունների սուբյեկտի մասին խոսելիս, ենթադրվում է, որ տնտեսական ընկերության մարմինը, որի միջոցով այն մտնում է քաղաքացիական շրջանառության մեջ և մասնակցում է կորպորատիվ հարաբերություններին, հանդիսանում է ընկերության միանձնյա գործադիր մարմինը:

Տնտեսական ընկերությունը որպես կորպորատիվ հարաբերությունների սուբյեկտ ճանաչելու հնարավորության ապացույց կարող է ծառայել այն փաստը, որ դրանց միջոցով են գործում այն անձինք, ովքեր իրենց կարգավիճակի ուժով վերահսկում են ընկերության գործունեությունը և ունեն իրական հնարավորություն իրենց լիազորություններն ինչպես ի շահ ընկերության, այնպես էլ դրան կամ առանձին մասնակիցների շահերին հակառակ օգտագործելու համար:

Ընկերությունը որպես կորպորատիվ հարաբերությունների սուբյեկտ դիտարկելու հնարավորությունը ամրագրում են ,Բաժնետիրական ընկերությունների մասին¹ և ,Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին ԶԶ օրենքները², որոնցով սահմանված է ընկերության կամ բաժնետիրոջ (բաժնետերերի, բաժնեմասերի սեփականատերերի, այսուհետ՝ բաժնետերեր) հնարավորությունը դիմելու դատարան ընդդեմ ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) անդամի, ընկերության միանձնյա գործադիր մարմնի (տնօրենի, գլխավոր տնօրենի), ընկերության կոլեգիալ գործադիր մարմնի անդամի (վարչության, տնօրինության), ինչպես նաև կառավարող կազմակերպության կամ կառավարչի՝ ընկերությանը պատճառված վնասները փոխհատուցելու հայցով:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր մարմինը, համաձայն ,Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին ԶԶ օրենքի 37-րդ հոդվածի, հրավիրում է ընկերության մասնակիցների ընդհանուր ժողով: ,Բաժնետիրական ընկերությունների մասին ԶԶ օրենքի 84-րդ հոդվածի համաձայն խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝ տարեկան և

¹ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2001.11.06/34(166):

² «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2001.12.07/38(170):

արտահերթ ժողովների գումարումը:

Նշված մարմինները պատասխանատու են ընկերության բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման համար:

ՀՀ գործող օրենսդրության համաձայն՝ բաժնետիրական ընկերությունում և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում ենթադրվում է կառավարման մի քանի մարմինների առկայություն. ընկերության բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովը ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է, խորհուրդը (դիտորդ խորհուրդը) իրականացնում է ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, ընկերության գործադիր մարմինը (միանձնյա կամ միանձնյա և կոլեգիալ) իրականացնում է ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը: ՀՀ Քաղ. օր.-ն, Քաժնետիրական ընկերությունների մասին և Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին ՀՀ օրենքները պարունակում են դրույթներ, որոնք վերաբերում են ընկերության կառավարման մարմինների միջև իրավասության սահմանազատմանը, այդ մարմինների կողմից որոշումների ընդունման կարգի սահմանմանը, ընկերության անունից քաղաքացիական շրջանառության մեջ մտնելու հնարավորության որոշմանը: Այսօր գոյություն ունեցող պրակտիկան թույլ է տալիս հետևություն անել այն մասին, որ տնտեսական ընկերության կողմից կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահումը տարբերվում է՝ կախված իրավասությունից, որով օժտված են ընկերության կառավարման մարմինները, դրանց լիազորությունների ծավալից:

Այժմ վերլուծության ենթարկենք ընկերության կառավարման մարմինների կառուցվածքը և իրավասությունները, քանի որ հենց դրանից կախված կլինի տնտեսական ընկերության կողմից կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահման ծավալը և եղանակները:

Տնտեսական ընկերությունների կառավարման մարմինների կառուցվածքը տարբեր է: Որպես կանոն, ընկերության կառավարման մարմինների կառուցվածքի ընտրությունը, դրանց իրավասության որոշումն իրականացվում է ընկերությունն ստեղծելիս, ամրագրվում է կանոնադրության մեջ և կախված է բաժնետերերի (մասնակիցների) քանակից, ընկերության ֆինանսական ներուժից, ընկերության կառավարման մարմինների կողմից կորպորատիվ հարաբերություններ-

րուն իրավունքի չարաշահումներից պաշտպանվելու ցանկության աստիճանից և մի շարք այլ գործոններից¹: ԱՄՆ-ում և ԱՆԳլիայում գործում է կառավարման մարմինների երկաստիճան համակարգ, որը ենթադրում է բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովի՝ որպես կառավարման բարձրագույն մարմնի և ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնող ընկերության գործադիր մարմնի առկայությունը: Գերմանիայում կիրառվում է եռաստիճան մոդելը, այսինքն՝ յուրաքանչյուր ընկերության համար պարտադիր է բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողով, տնօրենների խորհրդ (դիտորդ խորհրդ), որն իրականացնում է ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը և ընկերության գործադիր մարմնի առկայությունը: Ֆրանսիայում երկու մոդելն էլ միաժամանակ կիրառվում են: Եվրոպական միությունը տարիների քննարկումներից հետո, որ հետապնդում էր բաժնետիրական ընկերությունների կառավարման կառուցվածքը կարգավորող միասնական նորմեր սահմանելու նպատակ, առաջարկում է ներդնել եռաստիճան համակարգ: Միևնույն ժամանակ Եվրոպական միության անդամ-պետությունները կարող են կառավարման կառուցվածքի վերաբերյալ հարցը փոխանցել կազմակերպությունների հայեցողությանը:² ՀՀ օրենսդրությամբ թույլատրվում է կիրառել կառավարման երկաստիճան և եռաստիճան համակարգերը, իսկ գործունեության առանձին ոլորտներում ընդգրկված կազմակերպությունների համար նախատեսվում է կառավարման բացառապես եռաստիճան համակարգ³:

Բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովը հանդիսանում է ընկերության կառավարման բարձրագույն մարմինը: Բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովի իրավասությունը սահմանվում է ՀՀ Քաղ. օր-ի 115-րդ, 99-րդ հոդվածներով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածով և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մա-

¹ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Ավետիսյան Վ.Դ., Բաժնետիրական իրավունք, ուսումնական ձեռնարկ, Եր., 2005, էջ 130:

² Տե՛ս Торкановский Е. «Управление акционерным обществом». // Хозяйство и право. 1997. №6:

³ Օրինակ՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդվ 21, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդվ 21 և այլն:

սին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով, իսկ գործունեության առանձին ոլորտներում ընդգրկված կազակերապույունների պարագայում գործունեության տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ: Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը վերապահված հարցերը չեն կարող փոխանցվել ընկերության գործադիր մարմնի և ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) լուծմանը՝ բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի, Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության խորհուրդը իրականացնում է ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ բացառությամբ այն հարցերի լուծման, որոնք վերապահված են ընկերության բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովի իրավասությանը: Ընկերության խորհրդի (դիտորդ խորհրդի) իրավասությանը վերապահված հարցերը չեն կարող փոխանցվել ընկերության գործադիր մարմնի լուծմանը¹:

Ընկերության գործադիր մարմնի իրավասությանն են վերապահված ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ ընկերության բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովի կամ խորհրդի (դիտորդ խորհրդի) իրավասությանը վերապահված հարցերի: Ընկերության գործադիր մարմինը կազմակերպում է ընկերության բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովի և խորհրդի (դիտորդ խորհրդի) որոշումների կատարումը: Գործադիր մարմինները հաշվետու են ընկերության խորհրդին (դիտորդ խորհրդին) և ընկերության բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովին:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք 88-րդ հոդվածը, ի տարբերություն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, թույլ է տալիս բաժնետիրական ընկերությունում ստեղծել միանձնյա գործադիր մարմին կամ միաժամանակ գոյություն ունենալ միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմիններ: Կոնկրետ տնտեսական ընկերության գործադիր մարմինների կառուցվածքը որոշվում է դրա կանոնադրությամբ: Ն. Գ.

¹ Այդ մասին առավել մանրամասն տես Վ.Դ. Ավետիսյանի նշված աշխատությունը, էջեր 154-191:

Ֆրոլովսկին նշում է՝ քանի որ կառավարման յուրաքանչյուր մարմին օժտված է իր սեփական իրավասությամբ, ուստի ձեռնարկատիրական կորպորացիայում միաժամանակ միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմինների առկայությունը չի վկայում այն մասին, որ այն միասնական գործադիր մարմին է, և որ նման դեպքում միանձնյա գործադիր մարմինը գործում է որպես կոլեգիալ գործադիր մարմնի բաղկացուցիչ մաս¹:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք 88-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության կանոնադրությամբ, որը նախատեսում է միաժամանակ միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմինների առկայությունը, պետք է սահմանազատվի յուրաքանչյուրի իրավասությունը: Տվյալ դեպքում ընկերության միանձնյա գործադիր մարմնի (տնօրենի, գլխավոր տնօրենի) գործողություններն իրականացնող անձն իրականացնում է նաև ընկերության կոլեգիալ գործադիր մարմնի (վարչության, տնօրինության) գործառույթները²:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նորմերի դիսպոզիտիվության ուժով իրավունքի չարաշահումը հնարավոր է ընկերության կառավարման մարմիններից յուրաքանչյուրի կողմից: Ընկերության կառավարման մարմինների կառուցվածքից կախված՝ կարելի է խոսել կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահման տարբեր տեսակների մասին:

Սեր կարծիքով կորպորատիվ հարաբերություններում հնարավոր չէ կողմերից որևէ մեկին՝ ընկերության բաժնետիրոջը (մասնակցին) կամ տնտեսական ընկերությանը բոլոր դեպքերի առնչությամբ միանշանակ բնութագրել որպես իրավահարաբերության ուժեղ կամ

¹ Ст'у Фроловский Н.Г., Управление предпринимательскими корпорациями в Российской Федерации (Правовой аспект). Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Самара. 2006. էջ 145:

² «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը ի տարբերություն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի չի նախատեսում միաժամանակ միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմինների առկայությունը, սակայն ինչպես վերը նշվել է նույն օրենքի 35-րդ հոդվածը ՍՊԸ-ներում կանոնադրությամբ նախատեսված լինելու դեպքում հնարավոր է համարում խորհրդի ստեղծումը: Խորհրդի իրավասությունները սահմանվում են կանոնադրությամբ, հետևաբար կարծում ենք, չկա որևէ խոչընդոտ, որ ՍՊԸ-ներում նույնպես միաժամանակ գործեն և՛ միանձնյա, և՛ կոլեգիալ գործադիր մարմիններ:

թույլ կողմ: Կախված իրավական ակտերով ընկերության գործունեության կարգավորվածությունից, ընկերության կողմից բաժնետերերի (մասնակիցների) իրավունքները պահպանելուց, ինչպես նաև գործող օրենսդրության պահպանումից, ընկերության կառավարման մարմիններում պաշտոններ զբաղեցնող անձանց արհեստավարժության մակարդակից և մի շարք այլ գործոններից, ուժեղ կամ թույլ կողմ կարող են լինել կամ ընկերության բաժնետերերը (մասնակիցները), կամ տնտեսական ընկերությունը: Կորպորատիվ հարաբերություններում ուժեղ կամ թույլ կողմի բացահայտումն ունի էական նշանակություն օրենսդրական կարգավորումները մշակելիս, որը տվյալ դեպքում պետք է իրականացվի հավասարության հիմունքների վրա: Նշված հարաբերակցության որոշումը կարևոր է նաև իրավունքի չարաշահումը պարզելիս, քանի որ կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահումը և կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահումից պաշտպանությունն իրականացվում են միևնույն միջոցները կիրառելու հիման վրա:

Ընկերության բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովի կողմից իրավունքի չարաշահում հիմնականում տեղի է ունենում ընկերության բաժնետոմսերի (կանոնադրական կապիտալում բաժնի) մեծամասնության սեփականատեր բաժնետերերի (մասնակիցների) կողմից բաժնետերերի (մասնակիցների) փոքրամասնության համար ոչ շահավետ որոշում ընդունելու դեպքում¹:

Ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) կողմից իրավունքի չարաշահում հնարավոր է, օրինակ, միանձնյա գործադիր մարմին նշանակելիս, եթե նշված հարցի լուծումը վերապահված է խորհրդի (դիտորդ խորհրդի) իրավասությանը, խորհրդի (դիտորդ խորհրդի) կողմից խոշոր գործարքին հավանություն տալուց, որի առարկա է գույքը, որի արժեքը կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի քսանհինգից մինչև հիսուն տոկոսը, գործարքին, որի կնքման մեջ առկա է շահագրգռվածություն, ինչպես նաև խորհրդի (դիտորդ խորհրդի) կողմից ընկերության թողարկած լրացուցիչ բաժնետոմսերի շուկայական արժեքը հաստատելիս:

¹ Այդ մասին առավել մանրամասն տես Аветисян В. Д., Особенности консолидации акций и проблемы правового регулирования в Республике Армения: “Правонарушение и юридическая ответственность”, Материали международной научно-практической конференции, Тольятти, 2012, էջեր 1-13:

Ընկերության միանձնյա գործադիր մարմնի կողմից իրավունքի չարաշահում կարող է տեղի ունենալ, օրինակ, ընկերության բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման ընթացքում, եթե ընկերության կանոնադրության համաձայն՝ նշված հարցերը վերապահված են նրա իրավասությանը, ինչպես նաև ընկերության գույքը տնօրինելիս և մի շարք այլ դեպքերում:

Գ.Ֆ. Շերշենևիչը նշում է, որ մասնավոր տնտեսական տեսանկյունից բաժնետիրական ձևը անշահավետ է ընկերության վերահսկողության անբավարարության և դժվարության պատճառով: Ընկերության բազմանդամությունը, բաժնետերերի ցրվածությունը, ոչ միայն գործին, այլ նաև կանոնադրությանը ծանոթ չլինելը, քիչ հետաքրքրվածությունը հանգեցնում են նրան, որ ամբողջ գործի վարումը կենտրոնանում է վարչության ձեռքբերում, որը չի մտահոգում բաժնետերերի ժողովի կողմից չի դրսևորվում լուրջ վերահսկողությամբ: Ձեռնարկությունը տառապում է վարչության անդամների հսկայական դուրյբաչափերից, ծառայողների բազմաթիվ հաստիքներից, վարչության տնօրենները շահագրգռված չեն խնայողաբար վարվելու մեջ, չզգուշանալով տիրոջից՝ կատարում են ծախսեր, որոնք բազմաթիվ անգամներ գերազանցում են այն ծախսերը, որոնք կկատարվեին իրական տիրոջ հսկողությամբ: Այդ անզուսպ ծախսերով է բացատրվում նաև շահաբաժնի համեմատաբար աննշան մեծությունը¹: Հարկ ենք համարում նշել, որ հաճախ այդպես են վարվում ոչ միայն ընկերության կառավարման մարմինների անդամները, այլև խոշոր բաժնետերերը, որոնք որոշումներ կայացնելիս սեփական շահը փորձում են ներկայացնել որպես կորպորացիայի շահ:

Ընկերության կառավարման մարմինների կողմից ընկերության բաժնետերերի (մասնակիցների) իրավունքների խախտումները մեծամասամբ իրականացվում են ընկերության միանձնյա գործադիր մարմնի մասնակցությամբ: Նշված հանգամանքը բացատրվում է նրանով, որ ընկերության միանձնյա գործադիր մարմինը հանդիսանում է հիմնական կապող օղակն ընկերության և տնտեսական շրջանառության այլ մասնակիցների միջև արտաքին հարաբերություններում, ինչպես նաև ընկերության ներսում ծավալվող հարաբերություններում՝ ներքին, կորպորատիվ հարաբերություններում: Դա դառ-

¹ Տե՛ս Шершеневич Г.Ф., Курс торгового права. В 3 т. Классика российской цивилистики. М.: «Статут», 2003. 1 т., էջ 368:

նուև է հնարավոր այն բանի ուժով, որ ընկերության միանձնյա գործադիր մարմինն իրականացնում է ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Միանձնյա գործադիր մարմնի գործողությունների հաջողությունից կախված է տնտեսական ընկերության բարեկեցությունը, ինչը նշանակում է նաև նրա բաժնետերերի (մասնակիցների) բարեկեցությունը: Ընկերության ղեկավարի անբարեխիղճ գործունեության հետևանքներն անմիջականորեն անդրադառնում են ընկերության յուրաքանչյուր բաժնետիրոջ (մասնակցի) եկամուտների վրա, օրինակ՝ ընկերության շահաբաժինները չվճարելու կամ քիչ վճարելու տեսքով:

Վերլուծելով տնտեսական ընկերության միանձնյա գործադիր մարմնի կողմից կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահումը՝ անհրաժեշտ է ընդունել, որ նման արարքներից պաշտպանության քաղաքացիաիրավական միջոցների բացահայտման համար անհրաժեշտ է լուծել ընկերության միանձնյա գործադիր մարմնի իրավական բնույթի վերաբերյալ հարցը: Ներկայումս նշված հարցը վիճելի է համարվում: Նշված հարցի լուծումից է կախված ընկերության միանձնյա գործադիր մարմնի կողմից կնքված գործարքների նկատմամբ այն հետևանքների կիրառման հնարավորությունը, որոնք գործող օրենսդրությամբ նախատեսված են ներկայացուցչի կողմից անձամբ իր առնչությամբ կնքված գործարքների և ներկայացուցչի կողմից լիազորությունների գերազանցմամբ կնքված գործարքների համար, ինչը նշանակում է ընկերության կողմից կնքված մի շարք գործարքների վավերությունը:

Իրավաբանական գրականության մեջ չկա միասնական տեսակետ այն առնչությամբ, թե անհրաժեշտ է արդյոք իրավաբանական անձի մարմիններին դասել նրա ներկայացուցիչների թվին, թե՞ անհրաժեշտ է նրանց դիտարկել որպես իրավաբանական անձի բաղկացուցիչ մաս: Որոշ հեղինակներ ընկերության միանձնյա գործադիր մարմնին դիտարկում են որպես ընկերության բաղկացուցիչ մաս, ուրիշ հեղինակներ էլ ենթադրում են, որ ընկերության միանձնյա գործադիր մարմինը դրա ներկայացուցիչն է: Ստեղծված իրավիճակը բացատրվում է նրանով, որ այս հարցը հատուկ կարգավորված չէ գործող օրենսդրությամբ:

Դեռ 1950-60-ականներին իրավաբանական գրականության մեջ ակտիվ բանավեճ էր ընթանում իրավաբանական անձի մարմնին՝ որպես նրա ներկայացուցչի ճանաչելու հնարավորության վերաբեր-

յալ¹: Այսպես, որոշ հեղինակներ գտնում են, որ իրավաբանական անձի մարմնի կողմից իր ղեկավարած ձեռնարկության անունից հանդես գալն էականորեն տարբերվում է ներկայացուցչի գործունեությունից²: Առկա է նաև այլ տեսակետ, համաձայն որի՝ իրավաբանական անձի մարմինը նրա օրինական ներկայացուցիչն է. «օրինական ներկայացուցչության տարատեսակ է հանդիսանում այսպես կոչված «կանոնադրական» ներկայացուցչությունը, երբ կանոնադրության ուժով իրավաբանական անձը կամ որոշակի պաշտոն զբաղեցնող ղեկավար աշխատակիցն օժտված է իրավաբանական անձի կամ քաղաքացու անունից հանդես գալու լիազորությամբ»³:

Բ.Բ. Չերեպախինը գտնում էր, որ Ռրևէ դեպքում չի կարելի ասել, որ մարմինը ներկայացուցչություն է կատարում իրավաբանական անձի անունից: Իրավաբանական անձի ներկայացուցիչներ են հանդիսանում իրավաբանական անձի մարմնի կողմից լիազորված (կամավոր ներկայացուցչություն) կամ օրենքի ուժով համապատասխան լիազորություններով օժտված (պարտադիր ներկայացուցչություն) անձինք (քաղաքացիները կամ իրավաբանական անձինք)⁴: Այդ նույն կարծիքին էին Վ.Պ. Գրիբանովը և Ս.Մ. Կորնեևը⁵: Իսկ օրինակ՝ Օ.Ա. Կրասավչիկովը⁶ այն կարծիքին էր, որ քանի որ ներկայացուցչի կնքած գործարքների իրավական հետևանքները ծագում են անմիջականորեն ներկայացվողի համար, ապա իրավաբանական անձի մարմնի (տնօրենի, վարչության նախագահի) կողմից գործարք կնքելը չի կարելի համարել ներկայացուցչություն: Իրավաբանական անձի մարմինը ներկայացուցիչ չէ, այլ իրականացնում է իրեն պատկանող և կանոնադրությամբ նախատեսված իրավունքները և պար-

¹ St´u Иоффе О.С., Советское гражданское право. Л., 1958, էջ 160: Новицкий И.Б., Советское гражданское право. В 2 т. М., 1959.- 1 т., էջ 189:

² St´u Черепухин Б.Б. Труды по гражданскому праву. Сборник статей. /Классика российской цивилистики.М.: «Статут», 2001, էջ 479, Грибанов В. П., Корнеев С. М. Советское гражданское право. М., 1961, էջ 209:

³ St´u Советское гражданское право. В 2 ч. /под ред. В. А. Рясенцева. М., 1986. 1 ч., էջ 232:

⁴ St´u Черепухин Б.Б. Труды по гражданскому праву. Сборник статей. /Классика российской цивилистики. М.: «Статут», 2001, էջ 134:

⁵ St´u Грибанов В.П., Корнеев С.М. «Советское гражданское право». М., 1961, էջ 209:

⁶ St´u Красавчиков О.А. «Советское гражданское право» М., 1968, էջեր 275-276:

տակաճությունները: Մարմնի գործողությունները հանդիսանում են իրավաբանական անձի գործողություններ են:

Սակայն գրականության մեջ կան նաև հակառակ տեսակետի կողմնակիցներ: Այսպես՝ Ի.Վ. Շերեշևսկին իրավաբանական անձի մարմնին համարում էր նրա օրինական ներկայացուցիչը¹: Սկզբում նման կարծիքի էր հակված նաև Ա.Ն.Բրատուսը, որն իրավաբանական անձի մարմիններին դիտարկում էր որպես նրանց կանոնադրային ներկայացուցիչների²: Արդյունքում Ա.Ն. Բրատուսն³ ընդունեց, որ մարմնի գործողությունները հանդիսանում են իրավաբանական անձի գործողություններ, քանի որ դրա կամքի ձևավորումը և իրականացումն արտացոլված են այդ մարմնի՝ կանոնադրությամբ կամ կանոնակարգով նախատեսված լիազորությունների մեջ: Ա.Ն. Լանդկոֆը⁴ կանոնադրական ներկայացուցչություն էր համարում մարմնի կողմից իրավաբանական անձի անունից հանդես գալը: Այդ տեսակետն էր զարգացնում Դ.Մ. Չեչոտը⁵, որը, մարմիններին համարելով իրավաբանական անձի օրինական ներկայացուցիչներ, սխալական և ողջամիտ չէր համարում իրավաբանական անձի մարմնին՝ ի դեմս դրա ղեկավարի, իրավաբանական անձի հետ նույնացնելը:

Անհրաժեշտ է նշել, որ հարցն այն մասին, թե արդյո՞ք ընկերության տնօրենը նրա ներկայացուցիչն է, գոյություն ունի ոչ միայն մասնավոր-իրավական կարգավորման շրջանակներում, այլ հանրային իրավական կարգավորման շրջանակներում:

ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի⁶ 23-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված է, որ վարչական վարույթում որպես մասնակիցների ներկայացուցիչներ կարող են հանդես գալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձինք: Քանի որ միանձնյա գործադիր մարմնն առանց լիազորագրի գործում է ընկերության անունից, ապա վարչական վարույթում կազմակերպության ղեկավարը չի կարող ճանաչվել որպես նրա լիազոր ներկայացուցիչ: Հետևաբար, միանձնյա գործա-

¹ Տե՛ս Шерешевский И.В. Представительство (Поручение и доверенность). М., 1925, էջ 165:

² Տե՛ս Гражданское право: Учебник. В 2 т. М., 1944. 1т., էջ 201:

³ Տե՛ս Братусь С.Н., Субъекты гражданского права. М., 1950, էջ 98:

⁴ Տե՛ս Ландкоф С.Н., Основы гражданского права. Киев, 1948, էջ 132:

⁵ Տե՛ս Чечот Д.М., Участники гражданского процесса. М., 1960, էջ 157:

⁶ ՀՀ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքն ընդունվել է 18.02.2004թ. ՀՀ ՊՏ 2004/18(317), 31.03.40, հոդ. 413:

դիր մարմինը, ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի համաձայն, դասվում է կազմակերպության օրինական ներկայացուցիչների շարքը:

ՌԴ բարձրագույն արբիտրաժային դատարանի դատական պրակտիկայի վերլուծությունը նույնպես միանշանակ պատասխան չի տալիս այն հարցին, թե հանդիսանում է արդյոք կորպորացիայի ղեկավարը դրա ներկայացուցիչը: Նշված հարցի հետ կապված վեճերի քննության պրակտիկան միշտ հետևողական և տրամաբանական չէ, ՌԴ ԲԱԴ-ի նախագահության 21 ապրիլի 1998թ. N 33 տեղեկատվական նամակում¹, ՌԴ ԲԱԴ-ի նախագահության 27 հունվարի 1998թ. N 7035/97 որոշմամբ², ՌԴ ԲԱԴ-ի նախագահության 5 սեպտեմբերի 2000թ. N 0384/00 որոշմամբ³ միանձնյա գործադիր մարմինը դիտարկվում է որպես իրավաբանական անձի ներկայացուցիչ:

ՌԴ ԲԱԴ-ի նախագահության 1998թ. հունվարի 27-ի N 7035/97 որոշմամբ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագիրը ճանաչվել է առեղծված գործարք այն հիմքով, որ նշված պայմանագիրը կնքվել է ՌԴ քաղ. օր.-ի 182-րդ հոդվածի (ՀՀ Քաղ.օր.-ի 318 հոդ. 3 կետ) պահանջների խախտմամբ, համաձայն որի ներկայացուցիչը չի կարող կնքել գործարքներ ներկայացվողի անունից այլ անձի հետ, որի՝ ներկայացուցիչն ինքն է: Հայցվորի անունից 1997թ. փետրվարի 27-ի N 53 լիազորագրի հիման վրա առուվաճառքի պայմանագիր ստորագրած անձը միաժամանակ հանդիսանում էր նաև պատասխանողի ներկայացուցիչ՝ զբաղեցնելով «Կիրովյան անվադողերի գործարան» ԲԲԸ-ի գլխավոր տնօրենի պաշտոնը, որի պատճառով չէր կարող հանդիսանալ վաճառողի օրինական ներկայացուցիչը:

ՌԴ ԲԱԴ-ի նախագահության 1998թ. ապրիլի 21-ի N 33 տեղե-

¹ ՌԴ բարձրագույն արբիտրաժային դատարանի նախագահության՝ «Բաժնետոմսերի տեղաբաշխման և շրջանառության հետ կապված գործարքների վերաբերյալ վեճերի լուծման պրակտիկայի ամփոփում» 21 ապրիլի 1998թ. N 33 տեղեկատվական նամակ // «Ռուսաստանի Դաշնության Բարձրագույն արբիտրաժային դատարանի տեղեկագիրք», 1998թ. N 6:

² ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի նախագահության՝ 27 հունվարի 1998թ. N 7035/97 որոշումը // ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի տեղեկագիրք, 1998թ. N 5:

³ ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի նախագահության՝ 5 սեպտեմբերի 2000թ. N 0384/00 որոշումը // Բարձրագույն արբիտրաժային դատարանի տեղեկագիրք, 2000թ.:

կատվական նամակը պարունակում է նշում այն մասին, որ քանի որ հայցվորի՝ վերջինիս լիազորագրի հիման վրա առուվաճառքի պայմանագիր կնքած ներկայացուցիչը միաժամանակ հանդիսանում է այն ընկերության գլխավոր տնօրենը, որի բաժնետոմսերը գործարքի առարկա են, նրա կողմից կնքված գործարքը հանդիսանում է առաջինը:

ՀՀ Քաղ.օր-ի 318-րդ հոդ. 3-րդ կետի (ՌԴ քաղ. օր.-ի 182-րդ հոդվածի 3-րդ կետ) համաձայն՝ ներկայացուցիչը չի կարող կնքել գործարքներ ներկայացվողի անունից այլ անձի հետ կապված, որի ներկայացուցիչը նույնպես ինքն է հանդիսանում: Բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենը այս գործում խախտել էր այդ պահանջը, քանի որ հայցվորի անունից բաժնետիրական ընկերության օգտին, որի գործադիր մարմինն է ինքը և որի անունից զբաղեցրած դիրքի ուժով կնքել է գործարքներ, կնքել է պայմանագիր: Նման պայմանների դեպքում նրա կողմից կնքված պայմանագիրը ՀՀ Քաղ.օր-ի 305-րդ հոդ. (ՌԴ քաղ. օր.-ի 168-րդ հոդվածի) հիման վրա հանդիսանում է առաջինը:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ 3-192 ՎԴ 2008թ. գործով¹, Հիդրոմասնագետշինե ՓԲԸ լուծարային հանձնաժողովի նախագահի Հ. Սիմոնյանի կողմից ինքն իր հետ կնքված լուծարվող ընկերության պահանջի զիջման մասին պայմանագիրը ճանաչել է անվավեր: Այստեղ, ըստ էության, վճռաբեկ դատարանը արտահայտել է այն դիրքորոշումը, որ իրավաբանական անձի կառավարման մարմնի ղեկավարը ներկայացուցիչ է, հետևաբար ՀՀ Քաղ.օր-ի 318 հոդ. 3 կետի համաձայն՝ ներկայացուցիչը չի կարող կնքել գործարքներ ներկայացվողի անունից այլ անձի հետ կապված, որի ներկայացուցիչը նույնպես ինքն է հանդիսանում:

ՌԴ բարձրագույն արբիտրաժային դատարանի նախագահության՝ 1999թ. փետրվարի 9-ի N 6164/98², 2002թ. հոկտեմբերի 8-ի N

¹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 27.03.2102 թվականի թիվ 3-192 ՎԴ 2008թ. գործով կայացված որոշումը:

² Տե՛ս ՌԴ բարձրագույն արբիտրաժային դատարանի նախագահության՝ 9 փետրվարի 1999թ. N 6164/98 որոշումը // ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի տեղեկագիրք, 1999թ. N 8:

6113/02¹, մայիսի 30-ի 2000թ. N9507/99², 2002թ. հոկտեմբերի 8-ի N 6112/02³ որոշումները, ընդհակառակը, հենվելով ՌԴ քաղ. օր.-ի 53-րդ հոդվածի վրա, սահմանում են, որ իրավաբանական անձի մարմինները, որոնց շարքին է դասվում նաև ղեկավարը, չեն կարող դիտարկվել որպես քաղաքացիական իրավահարաբերության ինքնուրույն սուբյեկտներ և հանդիսանում են իրավաբանական անձի մաս, այսինքն՝ իրավաբանական անձի մարմինը չի հանդիսանում վերջինիս ներկայացուցիչը: Քանի որ իրավաբանական անձի մարմինը չի հանդիսանում վերջինիս ներկայացուցիչը, այդ մարմնի կողմից լիազորությունների գերազանցմամբ կնքված գործարքի դեպքում ՌԴ քաղ. օր.-ի 183-րդ հոդվածի 1-ին կետը (ՀՀ Քաղ.օր-ի 319 հոդ. 1 կետը) կիրառվել չի կարող, այսինքն՝ գործարքը չի կարող ճանաչվել որպես այն կնքած անձի անունից կնքված գործարք: Նման իրավիճակ կարող է լինել, օրինակ, խոշոր գործարք կնքելիս, այսինքն՝ գործարք կամ մի քանի փոխկապակցված գործարքներ, որոնք կապված են ընկերության կողմից այնպիսի գույք ուղղակի կամ անուղղակի ձեռքբերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի արժեքը կազմում է ընկերության ակտիվների՝ վերջին հաշվետու ժամանակահատվածում հաշվապահական հաշվետվության տվյալներով սահմանված հաշվեկշռային արժեքի քսանհինգ և ավելի տոկոսը: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք-ի 79-րդ հոդվածի 6-րդ կետի, «ՍՊԸ-ի մասին» ԴՕ-ի 46-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն հավանություն տալու սահմանված կարգի խախտմամբ կնքված գործարքը կարող է ճանաչվել անվավեր ընկերության կամ բաժնետիրոջ (մասնակցի) հայցով: Այն դեպքում, երբ միանձնյա գործադիր մարմինը դատարանի կողմից կճանաչվի որպես ընկերության ներկայացուցիչ, ապա նման գործարքը չի ճանաչվի անվավեր, այլ ՌԴ քաղ. օր.-ի 183-րդ հոդվածի (ՀՀ Քաղ.օր-ի 319 հոդ. 1 կետը) համաձայն՝ դրանով պարտավորությունների կատար-

¹ Տե՛ս ՌԴ բարձրագույն արբիտրաժային դատարանի նախագահության՝ 8 հոկտեմբերի 2002թ. N 6113/02 որոշումը // ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի տեղեկագիրք, 2002թ.:

² Տե՛ս ՌԴ բարձրագույն արբիտրաժային դատարանի նախագահության՝ 30 մայիսի 2000թ. N 9507/99 որոշումը // ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի տեղեկագիրք, 2000թ.:

³ Տե՛ս ՌԴ բարձրագույն արբիտրաժային դատարանի նախագահության՝ 8 հոկտեմբերի 2002թ. N 6112/02 որոշումը // ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի տեղեկագիրք, 2002թ.:

ման համար պատասխանատու կլինի ընկերության գործադիր մարմինը:

Կարծում ենք, որ նշված խնդիրն առավել արդիական է մեկ անձից կազմված ընկերությունների պարագայում:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը նման հնարավորություն տալիս է, մասնավորապես, օրենքի 88 հոդ. 3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ ընկերության տնօրենը ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում, իսկ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43 հոդ. 3 կետի «ա» ենթակետի համաձայն՝ ընկերության գործադիր մարմինը՝ առանց լիազորագրի գործում է ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ: Մեր կարծիքով իրավաբանական անձի գործադիր մարմինը հանդիսանում է իրավաբանական անձի կառավարման մարմին, որն օրենքի ուժով արտահայտում է իրավաբանական անձի կամահայտնությունը, օժտված է դրա անունից ներկայացուցչություն իրականացնելու լիազորություններով, հետևաբար գործադիր մարմնի ղեկավարը դասական առումով չի կարող դիտվել որպես իրավաբանական անձի ներկայացուցիչ, և այդ հարաբերությունների նկատմամբ ներկայացուցչության կանոնները ամբողջությամբ կիրառելի չեն:

Գտնում ենք, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքներում ընկերության միաձնյա գործադիր մարմնի իրավական էության կոնկրետացման մասով անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ, ինչը հնարավորություն կընձեռնի վերը նկարագրված իրավիճակներում համադրել կորպորացիայի և ղեկավար մարմիններում աշխատող անձանց շահերը, սահմանել նման իրավիճակներում գործարքներ կնքելու նոր ընթացակարգեր և կանոններ: Օրինակ՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ կետը լրացնել հետևյալ նախադասությամբ՝ «Միանձնյա գործադիր մարմնի կողմից ընկերության անունից կնքված գործարքների վրա չեն տարածվում ներկայացուցչի կողմից կնքված գործարքների վերաբերյալ կանոնները»: Առաջարկվում է նույնաբովանդակ լրացում կատարել նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետում:

Տնտեսական ընկերության կողմից՝ ի դեմս դրա կառավարման մարմինների, կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահումն առավել հաճախ արտահայտվում է ընկերության ակտիվները դուրս բերելով: Դա իր արտացոլումն է գտնում ընկերության գործադիր մարմնի կողմից իր լիազորությունների գերազանցմամբ գործարք կնքելու, ընթացիկ տնտեսական գործունեության ընթացքում գործարք կնքելու ճանապարհով ընկերության միջոցները ծախսելու մեջ և այլն: Գործող օրենսդրությունը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք-ի 60-րդ հոդված, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք-ի 48-րդ հոդված) ընկերության գործադիր մարմնին թույլ է տալիս կնքել գործարքներ կամ մի քանի փոխկապակցված գործարքներ, որոնք գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի քսանհինգ տոկոսից պակաս արժեքով գույքի ուղղակի կամ անուղղակի ձեռքբերման, օտարման կամ օտարման հնարավորության հետ: Ընդ որում, օրենսդիրը ոչ միայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքներում, այլև նորմատիվ իրավական այլ ակտերում չի պարզաբանում այն, թե ինչ է հասկացվում փոխկապակցված գործարքներ ասելով, որի հետ կապված հնարավոր է գույքի օտարման վերաբերյալ մի շարք գործարքների ոչ միանշանակ որակում:

Ընկերության միանձնյա գործադիր մարմնի կողմից ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի քսանհինգ տոկոսի արժեքի շրջանակներում գործարքների կնքման հնարավորության վերաբերյալ կանոնը չի տարածվում ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների վրա: Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենք-ի 61-րդ հոդվածի և Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին ՀՀ օրենք-ի 48-րդ հոդվածի համաձայն՝ այն խոշոր գործարքին հավանություն տալու մասին որոշումը, որի առարկան է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի քսանհինգից մինչև հիսուն տոկոսը կազմող արժեքով գույքը, ընդունվում է ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) բոլոր անդամների կողմից միաձայն, ընդ որում, հաշվի չեն առնվում ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) դուրս հանված անդամների ձայները: Իրականում «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահ-

մանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքների նշված նորմերը թույլ են տալիս ընկերության գույքն օտարել սահմանափակ քանակով և բացում են գրեթե անսահման հնարավորություններ ընկերության գործադիր մարմնի և ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) կողմից կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահման համար:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62-րդ, հոդվածի համաձայն՝ Ընկերության գործարքներում շահագրգիռ անձ է համարվում Ընկերության փոխկապակցված անձը, որը՝

ա) հանդիսանում է գործարքի կողմ կամ մասնակցում է գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ.

բ) գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ անձին փոխկապակցված անձ է:

Այդ հոդվածի իմաստով փոխկապակցված են համարվում ընկերության խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները, գործադիր մարմնի իրավասություններ իրականացնող իրավաբանական անձը կամ դրա տնօրենը կամ դրա խորհրդի անդամները կամ դրա կանոնադրությամբ կամ պայմանագրով նախատեսված՝ ղեկավարման գործառույթներ իրականացնող այլ անձինք, վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը), Ընկերության անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձինք և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով փոխկապակցված ճանաչվող այլ անձինք:

Նույնաբովանդակ պահանջներ է ներկայացնում նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը:

Տնտեսական ընկերության կողմից կորպորատիվ հարաբերություններում ընկերության գույքի օտարման հետ կապված իրավունքի չարաշահումը հնարավոր է, այդ թվում՝ նաև սնանկության (անվճարունակության) վերաբերյալ օրենսդրության օգտագործմամբ: Համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի¹ սնանկության կառավարիչն իրավունք ունի պարտապանի գույքը տնօրինելու: Ընդ որում, պարտապանի գույքի սեփականատերը կամ պարտապանի կառավարման մարմիններն իրավունք չունեն ընդունելու որոշում կամ որևէ այլ կերպ սահմանափակելու կառավարչի լիազորությունները պարտապանի գույքի տնօրինման առնչությամբ, ավելին՝ Սնանկու-

¹ «Սնանկության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2007.01.31/7(531)

յան մասին ԶԶ օրենքի 47-րդ հոդ. ուժով պարտապան իրավաբանական անձի մարմնի կողմից առանց սնանկության կառավարչի գույքի օտարման նպատակով կնքված ցանկացած գործարք առօրինակ է:

Չկապորված պրակտիկան այնպիսին է, որ արտաքին կառավարում իրականացնելիս մի շարք դեպքերում սնանկության կառավարիչների գործողություններն ուղղված են պարտապան-ձեռնարկության ունեցվածքն այս կամ այն միջոցով (վաճառք, կանոնադրական կապիտալի մեջ ներառում և այլն) ֆիզիկական անձանց նեղ շրջանակի, ինչպես նաև փաստացի հիմնադիրների նույն կազմով իրավաբանական անձանց փոխանցելուն: Անհրաժեշտ է ընդգծել, որ երբեմն նմանատիպ գործողություններն ուղղված են ձեռնարկության աշխատատեղերի և բիզնեսի պահպանմանը, որի առնչությամբ սկսվել է սնանկության գործընթաց, ինչպես նաև կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահումից պաշտպանությանը, որն իրականացվում է ձեռնարկության ոչ էական պարտքերի առնչությամբ պահանջներ ներկայացնելով, ձեռնարկության արժեքը նվազեցնելու նպատակով հարկային պարտավորություններն արհեստականորեն «ուռճացնելով» և այլ եղանակներով:

ԶԶ քաղ. օր.-ի 70-րդ հոդվածի 1-ին կետը և «Սնանկության մասին» ԶԶ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին կետը բաժնետերերին (մասնակիցներին) դասում է վերջին հերթի պարտատերերի շարքը, այսինքն՝ ընկերությանը ներկայացված նրանց պահանջները բավարարվում են նախորդ հերթի բոլոր պարտատերերի պահանջները բավարարելուց հետո: Այսպիսով, բաժնետերերը (մասնակիցները) փաստացի չեն դիտարկվում որպես ընկերության պարտատեր և, որպես հետևանք, չեն կարող ազդել սնանկության կառավարչի կողմից այն գործարքները կնքելու վերաբերյալ որոշման ընդունման գործընթացի վրա, որոնց առարկան է ընկերության ակտիվների օտարումը:

Բերված օրինակները մատնանշում են այն փաստը, որ օրենսդրի կողմից պատշաճ մակարդակով կարգավորված չէ ընկերության գույքի օտարման կառուցակարգը, որը վերջին հաշվով հանգեցնում է իրավունքի բազմաթիվ չարաշահումների, որոնք էլ իրենց հերթին հանգեցնում են ընկերության բաժնետերերի (մասնակիցների) իրավունքների խախտմանը:

Ընկերության կառավարման մարմինների կողմից կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահման այլ՝ առավել տա-

րածված տեսակ է տնտեսական ընկերության և դրա ակտիվների նկատմամբ վերահսկողությունը պահելու նպատակով իրավունքի չարաշահումը, որն արտահայտվում է, օրինակ, ընկերության բաժնետերերի (մասնակիցների) արտահերթ ընդհանուր ժողով անցկացնելու մասին որոշում չընդունելով, ինչպես նաև ընկերության բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովի նախապատրաստելիս և անցկացնելիս թույլ տրված տարբեր բնույթի խախտումներով և այլն: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) իրավասությանն են վերապահված նաև բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը և ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի հաստատումը: Որոշ դեպքերում տնտեսական ընկերության կողմից կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահումը կարող է արտահայտվել բաժնետերերի (մասնակիցների) արտահերթ ընդհանուր ժողով գումարելու մասին որոշում չընդունելու կամ դրա գումարումը մերժելու մասին որոշում ընդունելու տեսքով: Տվյալ դեպքում ընկերության նոր բաժնետերը (մասնակիցը) կարող է օգտվել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք-ի 38-րդ հոդվածի 1-ին կետով իրեն տրամադրված իրավունքից և ինքնուրույն իրավիրել ընկերության բաժնետերերի (մասնակիցների) արտահերթ ընդհանուր ժողով: Տնտեսական ընկերության կողմից կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահումը կարող է արտահայտվել նաև ընկերության բաժնետերերի (մասնակիցների) արտահերթ ընդհանուր ժողով իրավիրելու մասին որոշում ընդունելու ձևով, սակայն օրակարգում չընդգրկվի նման ժողովում ընդունված որոշումների վավերականության համար պարտադիր համարվող մի շարք հարցեր: Տվյալ դեպքում տարբերակները բազմաթիվ են, օրինակ՝ օրակարգում ընդգրկվում է գործող գործադիր մարմնի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ հարցը, սակայն չի ընդգրկվում նորի ընտրության հարցը: Արդյունքում ընկերությունը մնում է առանց ղեկավար մարմնի և այլն:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ ենք համարում նշել, որ տնտեսական ընկերության կողմից կորպորատիվ հարաբերություններում իրավունքի չարաշահման պատճառ են հանդիսանում ընկերության

բաժնետերերի (մասնակիցների) կողմից դրա կառավարման մարմինների գործունեության նկատմամբ պատշաճ վերահսկողություն չիրականացնելը, օրենսդրությամբ նշված գործընթացների իրականացման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը կամ անկատարությունը:

Vahram Avetisyan

Candidate of Legal Sciences, Docent, YSU Chair of Civil Law

David Serobyanyan

Candidate of Legal Sciences, Docent, YSU Chair of Civil Law

ABUSE OF RIGHTS BY JOINT STOCK COMPANIES AND LIMITED LIABILITY COMPANIES AS A FORM OF CORPORATE LEGAL OFFENSE

Modern market-organizational relations in the Republic of Armenia are fundamentally different from typical institutional relations of the Soviet period. On the basis of private interests, the subjects of civil law provide for the creation, reorganization and liquidation of the corporation. The bodies of the corporation shall adopt and ensure the implementation of mentioned decisions, choosing strategy of the corporation, distribute the income provided by social, cultural, and other non-profit programs. As a result, innovation, and, in some cases, inadequate legislation governing the activities of corporations, lack of enforcement lead to various violations, conflicts, which are based on misuse of corporate legal entities.

The article investigates some of the issues of abuse of the rights of joint stock companies and limited liability companies, law enforcement and make proposals for solving these problems.